ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2017 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-174-03.11.2017-ՏՀ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի նոյեմբերի_30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1385 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-174-03.11.2017-ՏՀ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Առաջարկում ենք օրենքի նախագծի 1-ին հոդվածում՝

1) առաջին պարբերությունից հանել «հետևյալ բովանդակությամբ» բառերը.

2) «քվեարկող բաժնեմաս» բառերը փոխարինել «բաժնեմաս» բառով, քանի որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի համաձայն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կանոնադրական կապիտալը բաժանված է բաժնեմասերի, որոնք չեն կարող լինել քվեարկող՝ ի տարբերություն բաժնետիրական ընկերությունների, որոնց կանոնադրական կապիտալը, համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի պահանջների, բաժանվում է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստող որոշակի թվով բաժնետոմսերի:

2. Օրենքի նախագծով նախատեսվող փոփոխությունն առաջացնում է նաև այլ հարաբերությունների կարգավորման անհրաժեշտություն: Խոսքը, մասնավորապես, արտահերթ ընդհանուր ժողովի գումարման հետ կապված ծախսերի փոխհատուցման, արտահերթ ընդհանուր ժողովի գումարում պահանջող մասնակիցների կողմից ներկայացվող պահանջին վերաբերող դրույթների մասին է: Ի դեպ՝ բաժնետիրական ընկերությունների մասով նման հարաբերությունները կարգավորված են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերով:

Առաջարկում ենք օրենքի նախագիծը լրացնել նշված հարաբերությունների կարգավորմանն ուղղված իրավադրույթներով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը մշակում է փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության ոլորտը կանոնակարգող օրենսդրական փաթեթ, որում անդրադարձ է արվում նաև օրենքի նախագծով ներկա-յացված խնդրի կարգավորմանը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-174-03.11.2017-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-252 օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2. Արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է ընկերության գործադիր մարմնի կողմից՝ իր նախաձեռնությամբ կամ պահանջը ներկայացնելու պահի դրությամբ ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով:

Ընկերության գործադիր մարմնի կողմից պահանջը ներկայացնելու պահի դրությամբ ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով ընդհանուր ժողով գումարելու պահանջ ներկայացնելու պահից 30 օրացույցային օրվա ընթացքում ընդհանուր ժողով չգումարվելու դեպքում պահանջը ներկայացրած մասնակիցը (մասնակիցները) կարող է (են) գումարել ընդհանուր ժողով:

Պահանջը ներկայացնելու պահի դրությամբ ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով ընդհանուր ժողով գումարվելու դեպքում ժողովի գումարման ձեւը եւ օրակարգը սահմանվում են այն գումարելու պահանջը ներկայացրած մասնակցի (մասնակիցների) կողմից:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.1. Իրավական ակտի անհրաժեշտությունը. Սույն նախագծի ընդունումը պայմանավորված է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների՝ ընկերության կառավարման իրավունքը կարգավորելու անհրաժեշտությամբ:

1.2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները. Սույն նախագծով առաջարկվող լրացումները նպատակ ունեն ապահովել մասնակցի՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի (ա) կետով սահմանված ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքը:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերության բարձրագույն մարմին է հանդիսանում ընդհանուր ժողովը: Բարձրագույն մարմնի կողմից կառավարում կարելի է իրականացնել հերթական կամ արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու միջոցով: Օրենքի 37-րդ եւ 38-րդ հոդվածներում արտահերթ եւ հերթական ժողովի հրավիրման իրավունքը վերապահված է գործադիր մարմնին: Այլ կերպ ասած՝ գործադիր մարմնի կամքից է կախված մասնակցի՝ օրենսդրությամբ սահմանված իրավունքների իրականացումը: Գործող խմբագրությամբ Օրենքի կիրառման հետեւանքով պրակտիկայում ստեղծվել է իրավիճակ, որտեղ 90 տոկոս բաժնեմաս տնօրինող մասնակիցներին անհրաժեշտ է ժողով հրավիրել, սակայն գործադիր մարմինը պարզապես ժողով չի գումարում: Մասնակիցներին մնում է տնօրենին ժողով հրավիրելուն պարտավորեցնելու պահանջի վերաբերյալ հայցով դիմել դատարան, բայց այդ դեպքում ժամանակի կորստի հետեւանքով ընկերությունը կարող է կրել նյութական եւ այլ անդառնալի կորուստներ: Ընդ որում, առաջարկվող նորմին համանման կարգավորում արդեն իսկ առկա է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածում:

1.3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախագծով առաջարկվում է Օրենքի 38-րդ հոդվածը խմբագրել այնպես, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու իրավունք ունենա(ն) նաեւ առնվազն 10 տոկոս բաժնեմաս ունեցող մասնակից(ներ)ը:

2. Կարգավորման առարկան. Նախագծի կարգավորման առարկան են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու հետ կապված իրավահարաբերությունները:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծի ընունման արդյունքում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու իրավունք կունենա(ն) նաեւ գումարային առումով ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմաս ունեցող մասնակից(ներ)ը: